Հավելված
ՀՀ վարչապետի 2016 թ.
մարտի 15-ի N 165 - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է կառուցապատման ներդրումային համակարգման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) գործունեության կարգը:

2. Խորհրդի հիմնական նպատակն է համակարգված մոտեցումների շնորհիվ ներգրավել և իրագործել կառուցապատման կարևոր ներդրումային ծրագրեր, որոնք կնպաստեն Հայաստանի Հանրապետության տնտեսական աճին և ռազմավարական կարևորության խնդիրների լուծմանը:

II. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Խորհուրդը՝

1) աջակցում է անհատ ներդրողների և կազմակերպությունների կողմից ներկայացված կառուցապատման ծրագրերի հաստատման աշխատանքում.

2) ապահովում է բարենպաստ պայմաններ ներդրումների համար՝ բարձրացնելով կառուցապատման ոլորտում կատարվող աշխատանքների արդյունավետությունը.

3) համակարգելով ներդրումային ծրագրերի իրականացումը՝ լուծումներ է տալիս դրանց արդյունավետ իրագործմանը խոչընդոտող խնդիրներին.

4) քննարկում է կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքները:

III. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան առնվազն տարին երկու անգամ, ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով՝ սույն աշխատակարգին համապատասխան:

5. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

6. Խորհրդի նիստերը հրավիրում է խորհրդի նախագահը:

7. Խորհուրդն իր արտահերթ նիստերը գումարում է աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած հարցերի ու խնդիրների լուծման նպատակով՝ խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

8. Խորհրդի նիստերի մասին խորհրդի անդամներին տեղեկացնում է խորհրդի քարտուղարությունը՝ նիստից առնվազն 5 օր առաջ, իսկ օպերատիվ բնույթի, հրատապ լուծում պահանջող հարցեր քննարկելու անհրաժեշտության դեպքում՝ մեկ աշխատանքային օր առաջ:

9. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Քվորումի բացակայության դեպքում մեկ շաբաթվա ընթացքում հրավիրվում է նոր նիստ:

10. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

11. Խորհրդի նիստերն անցկացվում են խորհրդի կողմից հաստատված օրակարգով: Խորհրդի նախագահը որոշում է խորհրդի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը, անհրաժեշտության դեպքում խորհրդի նախագահի որոշմամբ խորհրդի նիստերը կարող են անցկացվել արտագնա:

12. Խորհրդի նիստի օրակարգը տրամադրվում է խորհրդի անդամներին և այլ մասնակիցներին՝ նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ: Խորհրդի յուրաքանչյուր

անդամ իրավասու է խորհրդի նիստից առնվազն 4 աշխատանքային օր առաջ քարտուղարություն ներկայացնել օրակարգում հարց ընդգրկելու վերաբերյալ առաջարկություն:

13. Խորհրդի արտահերթ նիստի դեպքում օրակարգը տրամադրվում է խորհրդի անդամներին և այլ մասնակիցներին նիստի նույն օրը:

14. Խորհրդի անդամն իրավունք ունի խորհրդի ընդունած որոշմանը համաձայն չլինելու դեպքում ներկայացնելու իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը:

15. Նիստի արձանագրությանն անհրաժեշտության դեպքում կցվում են քննարկված հարցերին վերաբերող նյութեր, այդ թվում՝ իրավական և այլ փաստաթղթերի նախագծեր (հայեցակարգեր, ռազմավարություններ, հաշվետվություններ և այլն), գրավոր զեկույցների և ելույթների տեքստեր, առաջարկություններ:

16. Հարցի լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության դեպքում վերջինիս քննարկումը կարող է տեղափոխվել խորհրդի հաջորդ նիստ:

17. Յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցմամբ:

18. Խորհրդի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված պետական պաշտոնյաներ, ոլորտային ռազմավարության խորհուրդների, զանգվածային լրատվամիջոցների, դոնոր և այլ շահագրգիռ կազմակերպությունների, ոլորտային ընկերությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև միջազգային և տեղական խորհրդատուներ:

19. Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրվում է խորհրդի նախագահի կողմից՝ նիստի ավարտին հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:

20. Խորհրդի նիստերի արձանագրությունները պահվում են խորհրդի քարտուղարությունում:

IV. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

21. Խորհրդի նախագահը՝

1) հրավիրում և վարում է խորհրդի նիստերը.

2) ստորագրում է խորհրդի նիստի արձանագրությունները.

3) իր բացակայության դեպքում հանձնարարում է խորհրդի այլ անդամին վարել խորհրդի նիստը.

4) խորհրդի հաստատմանն է ներկայացնում խորհրդի նիստի օրակարգը:

V. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

22. Խորհրդի կազմը հաստատվում է, և խորհրդի անդամները նշանակվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

23. Խորհուրդը կարող է ձևավորել աշխատանքային և թեմատիկ խմբեր, փորձագիտական խորհուրդներ:

VI. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

24. Խորհրդի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. ներկայացնելու առաջարկություններ խորհրդի աշխատակարգում և այլ հիմնարար փաստաթղթերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ,

բ. ներկայացնելու խորհրդի որոշումների նախագծեր, հայտնելու իրենց կարծիքը խորհրդում քննարկվող ցանկացած հարցի և խորհրդի գործունեության ընթացակարգի վերաբերյալ.

2) պարտավոր են՝

ա. մասնակցել խորհրդի նիստերին,

բ. անհրաժեշտության դեպքում մասնակցել աշխատանքային և թեմատիկ խմբերի նիստերին,

գ. պահպանել խորհրդի աշխատակարգի դրույթները և կատարել խորհրդի որոշումները: Հնարավորինս աջակցել խորհրդի աշխատանքներին և նպաստել դրա որոշումների կատարմանը:

25. Խորհրդի անդամն իր պաշտոնից ազատվելու պահից կորցնում է խորհրդին անդամակցությունը:

26. Խորհրդի նիստին խորհրդի անդամի մասնակցության անհնարինության դեպքում մասնակցում է խորհրդի տվյալ անդամի լիազորած ներկայացուցիչը՝ խորհրդի նախագահի համաձայնությամբ:

VII. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

27. Խորհրդի քարտուղարությունը՝

1) նախապատրաստում է նիստին վերաբերող համապատասխան նյութերը և կազմակերպում է դրանց տրամադրումը խորհրդի անդամներին.

2) ապահովում է խորհրդի նիստի որոշումների նախագծերի կազմումը.

3) պետական մարմիններից, ոլորտային խորհուրդներից և այլ շահագրգիռ կողմերից ստացված առաջարկություններն ամփոփում և ներկայացնում է խորհրդի քննարկմանը.

4) հետևում է խորհրդի որոշումների կատարմանը.

5) վարում է խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը, այդ թվում՝ կազմում է խորհրդի նիստի արձանագրությունը,

6) խորհրդի նիստի արձանագրությունը տրամադրում է խորհրդի անդամներին և շահագրգիռ կողմերին:

28. Խորհրդի քարտուղարության պարտականությունները վերապահվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմին:

VIII. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

29. Խորհրդի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ